ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/83

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 25.06.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ բողոքներ քննող անձին 25.06.2018թ. ներկայացրել էր բողոք, որով հայտնել էր հետևյալը.

««Սիսիանի հաց» ՍՊԸ-ն մասնակցել է Սիսիանի համայնքապետարանի /այսուհետ՝ պատվիրատու/ կողմից 05.06.2018թ. հայտարարված ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցմանը, որը պետք է իրականացվեր մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:

12.06.2018թ. ըստ ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի նիստի թիվ 2 արձանագրության, ընկերության և ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան (արձանագրությունը կցվում է):

13.06.2018թ. ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գրություն է ուղարկել Ա/Ձ Սեյրան Առաքելյանին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

19.06.2018թ., քանի որ լրացել էր ծանուցումն ուղարկելու օրվանից 3-րդ աշխատանքային օրը, ընկերությունը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, խնդրել է անհապաղ տրամադրել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված՝ ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի բոլոր արձանագրությունները:

19.06.2018թ.՝

- գնահատող հանձնաժողովի կողմից ընկերության էլ. փոստին ուղղարկելու միջոցով ստացվել են ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը:
- ուսումնասիրելով ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ն արձանագրել է մի շարք թերություններ, որոնց մասին նույն օրը հայտնել է գնհատող հանձնաժողովին (դիմումը կցվում է):
- գնահատող հանձնաժողովը ԱՁ Սեյրան Առաքելյանից պահանջել է հրավերով սահմանված կարգով և ժամկետներում շտկել անհամապատասխանությունները:

20.06.2018թ.-ին պատվիրատուի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը, որի համաձայն Ա/Ձ Սեյրան Առաքելյանին առաջարկվել է կնքել պայմանագիր:

22.06.2018թ. ընկերությունը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, խնդրել է անհապաղ տրամադրել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված՝ ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից շտկված որակավորման փաստաթղթերը (դիմումը կցվում է):

22.06.2018թ. ընկերության հաշվապահը բազմաթիվ անգամ զանգահարել է գնահատող հանձնաժողովին՝ պահանջելով ուղարկել պահանջվող փաստաթղթերը, սակայն այդպես էլ

օրենքով սահմանված կարգով ընկերությունը չի ստացել ԱՁ Սեյրան Առաքելյանի շտկված որակավորման փաստաթղթերը:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործնթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Ինչպես արդեն նշվել է, 22.06.2018թ. ընկերությունը էլեկտրոնային եղանակով դիմել է տեղեկատվություն տնօրինող ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ անհապաղ Էլեկտրոնային եղանակով /հայտում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով/ տրամադրել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչված՝ ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից շտկված որակավորման փաստաթղթերը: Սակայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը այդպես էլ չի տրամադրել ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված շտկված որակավորման փաստաթղթերը, որի արդյունքում ընկերությունը փաստացիորեն զրկվել է հնարավորությունից գնահատելու ընթացակարգի գնհատող հանձնաժողովի կողմից կայացրած ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված շտկված՝ որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հրավերի պահանջներին համապատասխանող գնահատելու վերաբերյալ որոշումը, գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանելու վերաբերյալ:

Ավելին, ընկերության կողմից ներկայացված դիմումին պահանջված փաստաթղթերը չներկայացնելով՝ պատվիրատուն ստեղծել է մի իրավիճակ, երբ ընկերությունը պահանջելով

փաստաթղթերը և այդպես էլ չստանալով՝ զրկվել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնահատող հանձնաժողովի որոշումը բողոքարկելու իրիրավունքը իրացնելու հնարավորությունից:

Գտնում ենք, որ նման պայմաններում ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված յուրաքանչյուր անձի իրավունքը ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Վերոհիշյալը իր հերթին հանգեցրել է Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գնահատող հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրավունքը իրացնելու խախտմանը:

Հարկ ենք համարում նշել, որ նշված պայմաններում 20.06.2018թ.-ին պատվիրատուի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը, որի համաձայն Ա/Ձ Սեյրան Առաքելյանին առաջարկվել է կնքել պայմանագիր:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքը քննող անձին խնդրում ենք՝

1.Պարտավորեցնել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում և ընկերությանը տրամադրել ԱՁ Սեյրան Առաքյանի կողմից ներկայացված և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող ներկայացված բոլոր շտկված փաստաթղթերը:

2.Դադարեցնել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից 20.06.2018թ. կայացրած պայմանագիր կնքելու մասին որոշումը»:

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ն 28.06.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ի լրումն վերոհիշյալ բողոքի՝ ներկայացվել է բողոքի լրացում, որով վերջինս հայտնել է հետևյալը.

«22.06.2018թ. ընկերությունը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, խնդրել է անհապաղ տրամադրել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից

ճանաչված՝ ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ՇՏԿՎԱԾ որակավորման փաստաթղթերը (դիմումը կցվում է):

22.06.2018թ. ընկերության հաշվապահը բազմաթիվ անգամ զանգահարել է գնահատող հանձնաժողովին՝ պահանջելով ուղարկել պահանջվող փաստաթղթերը, սակայն այդպես էլ օրենքով սահմանված կարգով ընկերությանը չի ստացել ԱՁ Սեյրան Առաքելյանի շտկված որակավորման փաստաթղթերը և միայն 25.06.2018թ.-ին՝ ընկերության կողմից ԳԲԽ-ԷՍ-2018/83 ծածկագրով բողոքը ներկայացնելուց հետո, ուշացումով գնհատող հանձնաժողովի կողմից տրամադրվել են որակավորման փաստաթղթերը՝ այսպիսով խախտելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

Ընկերությունը՝ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված շտկված որակավորման փաստաթղթերը, արձանագրել է, որ մի շարք թերություններ այդպես էլ չեն շտկվել, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված 6.1/ չեն շտկվել բոլոր չափաբաժինների տեխնիկական բնութագրերը՝ բացակայում է ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր չաբաբաժինների տեխնիկական բնութագրերում առկա նշված պահանջները, այն է՝

- մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից 2018 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ երեխաների հաճախումներին համապատասխան:

- 1-ին փուլով մատակարարումն իրականացվում է ձեռքբերվող ապրանքի ներկայացված քանակի 7%-ի չափով:

Ինչպես նաև ընկերությունը ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից 2-րդ չափաբաժնում նշված «Անուշ Լինի» ՍՊԸ-ից ճշտում է կատարել և պարզել, որ իրենց ընկերության կողմից վաճառվող բրինձի ծագման երկիրը Թայլանդն է և ոչ Հայաստանի Հանրապետությունը, որը կարծում եմ տրամաբանական է, քանի որ մեր բնակլիմայական պայմաններում բրինձ չի աճում:

Ինչպես նաև ընկերությունը մտահոգված է 22 չափաբաժնում նշված «Տուլչինկա» ՍՊԸ կողմից արտադրվող «Տուլչինկա» ապրանքային նշանով կարագի մատակարարումով, քանի որ վերջինս հանդիսանում է սփրեդ, մինչդեռ պահանջվում էր սերուցքային կարագ:

Վերոգրյալով պայմանաորված ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված հայտը պետք է մերժվեր գնահատող

հանձնաժողովի կողմից, քանի որ ԱՁ Սեյրան Առաքելյանը իր կողմից ներկայացրած հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել է, որ ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքների՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնհատվում են անբավարար և մերժվում են:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1-րդ կետի պահանջների համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ նույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, հանձնաժողովին է ներկայացնում նույն հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընթացակարգի հրավերի առաջին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետի պահանջների համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 7.21 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.20-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

28.06.2018թ.-ին ԳԲԽ-ԷՍ-2018/83 ծածկագրով տեղի ունեցած բողոքի քննության վերաբերյալ առաջին նիստի ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նշվեց, որ քանի որ ընթացակարգը չափաբաժիններով է և հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների՝ ընկերության կողմից անհրաժեշտ է ճշտել /հստակեցնել/, որ չափաբաժիններին է վերաբերում բողոքը և որն է բողոքի առարկան, ինչին ընկերության լիազոր ներկայացուցիչը պատասխանեց, որ բարցրացված հարցերին ընկերությունը լրացուցիչ գրավոր կպատասխանի:

Վերոգրյալով պայմանավորված՝ ընկերությունը հայտնում է, որ բողոքը վերաբերվում է ընթացակարգի թիվ 1-ից 40-րդ չափաբաժիններին /ընթացակարգի բոլոր չափաբաժիններին/, իսկ բողոքի առարկան կայանում է նրանում, որ պատվիրատուն ընթացակարգի հրավերի հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետը տողով՝ 1-ից 40-րդ չափաբաժինների մասով, սահմանել է, որ սննդամթերքի մատակարարման ժամկետը Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում, և նույն հավելված 1-ի ապրանքի տեխնիկական բնութագիր տողով՝ 1-ից 40-րդ չափաբաժինների մասով, սահմանել է, որ մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից 2018 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ երեխաների հաճախումներին համապատասխան և 1-ին փուլով մատակարարումն իրականացվում է ձեռքբերվող ապրանքի ներկայացված քանակի 7%-ի չափով, ինչը ԱՁ Սեյրան Առաքելյանը չի նշել իր կողմից ներկայացված և արդեն իսկ շտկված որակավորման փաստաթղթերի, հավելված 1-ի՝ ապրանքի տեխնիկական բնութագիր տողով՝ 1-ից 40-րդ չափաբաժինների մասով:

Այսպիսով՝ վերջին նշված պահանջը, որը սահմանված էր ընթացակարգի հրավերի հավելված 1-ի ապրանքի տեխնիկական բնութագիր տողով՝ /առանձին-առանձին նշված լինելով բոլոր չափաբաժինների տեխնիկական բնութագրերում/ 1-ից 40-րդ չափաբաժինների

մասով, բացակայում է ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված արդեն իսկ շտկված որակավորման փաստաթղթերի՝ հավելված 1-ի՝ ապրանքի տեխնիկական բնութագիր տողով, 1-ից 40-րդ չափաբաժինների մասով, որը էական /անդառնալի/ նշանակություն կունենա նման պայմաններով պայմանագրի կատարման փուլում:

Այսինքն, ԱՁ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված արդեն իսկ պատվիրատուի պահանջով շտկված՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, վերջինս փաստացի պետք է ընթացակարգի 1-ից 40-րդ չափաբաժինների մասով, սննդամթերքը մատակարարեր պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում, մինչդեռ պատվիրատուն ընթացակարգի հրավերով 1-ից 40-րդ չափաբաժինների մասով, ընթացակարգի հրավերի հավելված 1-ի՝ ապրանքի տեխնիկական բնութագիր տողով /սյունակով/ սահմանել էր պահանջ, որ մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից 2018 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներում ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ երեխաների հաճախումներին համապատասխան, այլ ոչ թե պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 (քսան) օրացույցային օրվա ընթացքում:

Ինչպես նաև ընկերությունը ուզում է նկատել, որ վերոգրյալը չի հանդիսանում տեխնիկական բնութագրի ծանոթություն բաժին, կամ ինչ-որ հավելյալ պայման, այլ նշվածը ընթացակարգի հրավերով հանդիսանում է 1-ից 40-րդ չափաբաժինների մասով առանձին-առանձին նշված տեխնիկական բնութագիր՝ գնման առարկայի բնութագիր: 16.12.2016թ. ընդունված «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասով և հրավերի 8.7 կետով սահմանված պահանջների համաձայն՝ մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի նախագծում կարող են կատարվել փոփոխություն սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրի, այդ թվում՝ գնման ժամանակացույցի փոփոխմանը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին կրկին անգամ խնդրում ենք՝

- Դադարեցնել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացրած հայտը մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և վերջինիս առաջին տեղ զբաղեցնող, և այնուհետև հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումները՝ ընթացակարգի թիվ 1-ից 40-րդ չափաբաժիններին /ընթացակարգի բոլոր չափաբաժինների/ մասով:
- Պարտավորեցնել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացրած հայտը

գնահատել անբավարար և մերժել այն՝ ընթացակարգի թիվ 1-ից 40-րդ չափաբաժինների /ընթացակարգի բոլոր չափաբաժինների/ մասով:

• Դադարեցնել ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատող հանձնաժողովի Ա/Ձ Սեյրան Առաքելյանի հետ պայմանագիր կնքելու որոշումը՝ ընթացակարգի թիվ 1-ից 40 չափաբաժիններին /ընթացակարգի բոլոր չափաբաժինների/ մասով»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Աննա Ղուկասյանը և Արթուր Պարանյանը:

2. Սիսիանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Սիսիանի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 25.06.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի և 28.06.2018թ. ներկայացրած բողոքի լրացման վերաբերյալ 02.07.2018թ. թիվ 866 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սիսիանի համայնքը որպես պատվիրատու ուսումնասիրել է 22-րդ չափաբաժինը, որտեղ նշված է «Тульчинка» ООО կազմակերպությունը, որն ունի կարագի և սփրեդի արտադրություն (ուսումնասիրությունը կատարվել է www.tulchinka.ru կայքից, որը հանդիսանում է «Тульчинка» ООО կազմակերպության պաշտոնական կայքը), իսկ 2-րդ չափաբաժնում, որտեղ նշված է բրնձի ծագման երկիրը՝ Հայաստան, Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից կատարվել է շտկում և ծագման երկիրը նշվել է Թայլանդ»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Դավիթ Այվազյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2018/83 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից 25.06.2018թ. ներկայացրած բողոքը և 28.06.2018թ. ներկայացրած բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերը

(այսուհետ՝ նաև Հրավեր), «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.06.2018թ. ժամը 11:00-ի հայտերի բացման և գնահատման նիստի N 2 արձանագրությունը, Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի 02.07.2018թ. թիվ 866 գրությամբ հայտնած դիրքորոշումը և կարծիքը.

Սիսիանի համայնքապետարանի կարիքների համար սննդի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցմանը (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտեր են ներկայացրել «Սիսիանի հաց» ՍՊԸ–ն և Ա/Ձ Սեյրան Առաքելյանը:

Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընթացակարգի 1-ից 40-րդ չափաբաժինների մասով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերով նախատեսվել են հետևյալ պայմանները. «Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից 2018թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում՝ ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ երեխաների հաճախումներին համապատասխան: 1-ին փուլով մատակարարումն իրականացվում է ձեռքբերվող ապրանքի ներկայացված քանակի 7%-ի չափով»:

Ա/Ձ Սեյրան Առաքելյանը Ընթացակարգին ներկայացված հայտի N4 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրի պահանջներին, և պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիրը):

Հանձնաժողովը՝ 12.06.2018թ. ժամը 11:00-ի հայտերի բացման և գնահատման նիստի N 2 արձանագրության՝

-2.2 կետով արձանագրել է, որ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված հայտում պահանջվող փաստաթղթերն առկա են:

-2.3 կետով արձանագրել է, որ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի և Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են սահմանված պայմաններին համապատասխան:

-2.4 կետով արձանագրել է «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի և Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված գնային առաջարկները՝ 1-ից 40-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը 13.06.2018թ. գրությամբ դիմել է Ա/Ձ Սեյրան Առաքելյանին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Ա/Ձ Սեյրան Առաքելյանը 18.06.2018թ. հանձնաժողովին է ներկայացրել Ընթացակարգի հրավերի 6.1 հավելվածը՝ իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների) անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը, որում նշել է, որ սննդամթերքը կմատակարարվի պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 (քսան) օրացուցային օրվա ընթացքում:

Պատվիրատուն 19.06.2018թ. Ա/Ձ Սեյրան Առաքելյանին ուղղված գրությամբ տեղեկացրել է, որ վերջինիս կողմից ներկայացված հրավերի 6.1 հավելվածում արձանագրվել են անհամապատասխանություններ, և առաջարկել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Ա/Ձ Սեյրան Առաքելյանը Պատվիարտուին է ներկայացրել 6.1 հավելվածի շտկված տարբերակը, որում առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը դարձյալ չեն պարունակել հետևյալ պայմանները. «Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից 2018թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում՝ ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ երեխաների հաճախումներին համապատասխան: 1-ին փուլով մատակարարումն իրականացվում է ձեռքբերվող ապրանքի ներկայացված քանակի 7%-ի չափով»:

Պատվիրատուն 20.06.2018թ. տեղեկագրում հրապարակել է ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների և բնակավայրերում գործող խմբերի կարիքների համար կենտրոնացված կարգով սննդի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը,

համաձայն որի Ընթացակարգի 1-ից 40-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Սեյրան Առաքելյանը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ 09.07.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչները Բողոքներ քննող անձին հայտնեցին, որ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից Ընկերությանը տրամադրվել են հայցվող փաստաթղթերը, ինչպես նաև խնդրեցին չքննարկել 25.06.2018թ. Բողոքով նշված՝ Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից Ընթացակարգի 2-րդ և 22-րդ չափաբաժինների մասով ներկայացված ապրանքների բնութագրերին առնչվող դիտարկումները, քանի որ Ընկերությունը չի կարող ներկայացնել վերը նշված հարցերի վերաբերյալ համապատասխան ապացույցներ:

Միաժամանակ վերջիններս խնդրեցին՝ որպես քննարկման առարկա, հիմք ընդունել ի լրումն Բողոքի ներկայացված լրացմամբ ներկայացված փաստական հանգամանքները և պահանջը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ (...)պատվիրատուի ղեկավարի կողմից սահմանված ժամկետներում պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար:
- 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն, արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):
- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով

ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը(...):

• 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

«ՍՄՍՔ-ԳՀԱՊՁԲ-18/11» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ 2-րդ չափաբաժնի համար հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

-7.13 կետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

-7.20 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված, ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված, որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի և (կամ) ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում

հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում ծանուցմանը պարտադիր կցվում է հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը, որում պարտադիր և մանրամասն պետք է նկարագրված լինեն գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ներառյալ ապրանքի ամբողջական նկարագրի վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով մասնակցին տեղեկություն ներկայացնելու պայման սահմանվելու դեպքում միաժամանակ ներկայացվում են այդ տեղեկության վավերապայմանները:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 237-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով էլեկտրոնային եղանակով կազմակերպվող բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հայտարարությունների և հրավերի օրինակելի ձևի (այսուհետ՝ նաև Հրավերի օրինակելի ձև) N6.1 հավելվածով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, նախատեսված են հետևյալ վավերապայմանները՝ առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից հայտով ներկայացված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի տարբերակում առկա են Հրավերի 6.1 Հավելվածի օրինակելի ձևով նախատեսված պարտադիր վավերապայմանները՝ առաջարկվող ապրանքի անվանումը,

ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը:

- Ընթացակարգի 1-ից 40-րդ չափաբաժինների մասով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերով նախատեսվել են հետևյալ պայմանները. «Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից 2018թ. 3-րդ և 4-րդ եռամսյակներում՝ ներկայացված պահանջագրերի հիման վրա՝ երեխաների հաճախումներին համապատասխան: 1-ին փուլով մատակարարումն իրականացվում է ձեռքբերվող ապրանքի ներկայացված քանակի 7%-ի չափով:»:

Այսպիսով, բողոքաբերի այն պնդումը, որ Պատվիրատուի կողմից տեխնիկական բնութագրում նշված՝ ձեռքբերվող ապրանքի մատակարարման ժամկետի և քանակի վերաբերյալ տեղեկատվությունը Ա/Ձ Սեյրան Առաքելյանի կողմից ներկայացված Հրավերի 6.1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագրում չնշելը հանդիսանում է վերջինիս հայտը մերժելու հիմք, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, քանի որ տվյալ սահմանումը չի հանդիսանում մատակարարման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրի բաղադրիչ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Սիսիանի հաց» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 25.06.2018թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**